Հաստատում եմ՝

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Սերգեյ Միաքելյան

12.04.2023թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Աննա Արայի Մկրտչյանի՝ «Իրավունքի ինքնապաշտպանությունը քաղաքացիական իրավունքում» թեմայով ԺԲ.00.03-մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող թեկնածուական ատենախոսությունը նվիրված է իրավունքի ինքնապաշտպանության էության և բնույթի, քաղաքացիական իրավունքում դրա տեղի և դերի, ինքնապաշտպանության ինստիտուտի առանձնահատկությունների, ինքնապաշտպանության եղանակների, իրավունքների ինքնապաշտպանության և պաշտպանության այլ ձևերի տարանջատման ուսումնասիրությանը:

Հեղինակը փորձել է մշակել գիտական այնպիսի աշխատանք, որը կարելի է համարել ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում առաջին համալիր հետազոտությունը:

Ժամանակակից իրավական համակարգն անձի իրավունքների ոչ միայն իրացման, այլև դրանք պաշտպանելու իրավական հնարավորությունն ապահովող երևույթ է: Քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլ բնույթի միջոցների կողքին իրավական միջոցներն են, որ կոչված են ապահովելու անհրաժեշտ պայմանները անձանց սուբյեկտիվ իրավունքների իրականացման համար:

Իրավունքի արդի ընկալումների տեսանկյունից իրավունքների ինքնապաշտպանությունը՝ որպես քաղաքացիաիրավական երևույթ, ամրագրված է իրավական տարբեր համակարգերում: Օրենսդրական մոտեցումներն ու կարգավորումները տարբեր են՝ մի կողմից հնարավորություն ընձեռելով օրենքով չարգելված բոլոր եղանակներով իրականացնել քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանություն, մյուս կողմից՝ իրավունքների ինքնապաշտպանության իրականացումը հնարավոր և օրինաչափ համարել միայն օրենքով նախատեսված դեպքերում:

Հետազոտության առարկա հանդիսացող իրավունքի ինստիտուտը ներպետական օրենսդրությունում կարգավորված է թերի և հաճախ օգտագործվում է որպես պաշտպանական համակարգի դրսևորում:

Այս և նմանատիվ այլ գործոնների ազդեցությամբ պայմանավորված՝ քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության սահմանների, երաշխիքների և կառուցակարգերի հստակ նշագծման հիմնահարցերը պահանջում են հրատապ և անհետաձգելի տեսական հետազոտություն, դրա հիմքով արվող գիտագործնական առաջարկություններ:

Շարադրվածը, բնականաբար, վկայում է Ա. Մկրտչյանի կողմից ընտրված թեմայի արդիականության և հրատապության մասին:

Հետազոտության արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ հետագա գիտական հետազոտությունների համար: Ատենախոսության մեջ ներկայացված մոտեցումներն ու կատարված հետազոտության արդյունքների վրա հիմնված առաջարկությունները կարող են օգտագործվել օրենսդրության կատարելագործմանն ուղղված օրինաստեղծ գործունեության ընթացքում, իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև ուսումնական գործընթացում:

Աշխատանքը կառուցված է տրամաբանական հաջորդականությամբ, այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, դրանցում ներառված ինը ենթագլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Ներածությունում հեղինակի կողմից շարադրվում է ընտրված թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության օբյեկտն ու առարկան, ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, ուսումնասիրության մեթոդաբանությունը և մեթոդները, տեսական, նորմատիվ և էմպիրիկ հիմքերը, ատենախոսության գիտական նորույթն ու կատարված ուսումնասիրության արդյունքների տեսական ու գործնական նշանակությունը:

Առաջին գլխում՝ «Քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտի էությունը» վերտառությամբ, հեղինակը ներկայացնում է քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտի հասկացությունը և իրավական բնույթը, քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության, որպես իրավունքի պաշտպանության «ոչ յուրիսդիկցիոն» ձևի, կիրառման պայմանները:

Հիմնվելով կատարված ուսումնասիրության վրա՝ հեղինակը կատարում է մի շարք առաջարկներ, որոնք, մասնավորապես, հանգում են հետևյալին.

- Իրավունքների ինքնապաշտպանությունը բացառապես ինքնապաշտպանության ակտիվ սուբյեկտի կամարտահայտմամբ պայմանավորված իրավական երևույթ է՝ միտված իրավահարաբերությունների բնականոն ընթացքի, ցանկալի վերջնարդյունքին հասնելու ապահովմանը,
- Իրավունքների ինքնապաշտպանությունն ընդունված է դասել ոչ յուրիսդիկցիոն պաշտպանության ձևերի շարքին,
- Ինքնապաշտպանության ձեռնարկումը չի պայմանավորվում որևէ լիազորությամբ օժտված մարմնի համազոր գործողություններից և դրա կատարումը պայմանավորված է բացառապես սուբյեկտի կամահայտնությամբ,

- Ինքնապաշտպանությունը կարող է առաջացնել անբարենպաստ հետևանքներ ինչպես ինքնապաշտպանություն կիրառողի, այնպես էլ իրավախախտի դեպքում,
- Իրավունքների ինքնապաշտպանությունը՝ որպես օրենսդրական ամրագրում ստացած իրավական երևույթ, պետք է ունենա իրավական կարգավիճակ և դրանից բխող օրենսդրական ամրագրումներ, որոնք հնարավորություն կտան խուսափել ինստիտուտի կիրառության խրթին մեխանիզմներից:

Աշխատանքի երկրորդ գլխում՝ «Քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության եղանակները» վերտառությամբ, հեղինակը մանրամասն անդրադարձել է քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության եղանակների էությանը, դրանց դասակարգմանը, օպերատիվ ներգործության միջոցների և ինքնապաշտպանության հարաբերակցությանը քաղաքացիական իրավունքում, ուսումնասիրել է ներխուժումը կանխելը կամ վերացնելը և պահումը, անհրաժեշտ պաշտպանությունն ու ծայրահեղ անհրաժեշտությունը՝ որպես իրավունքների ինքնապաշտպանության եղանակներ:

Հեղինակը, համեմատական վերլուծության ենթարկելով քննարկվող ինստիտուտի իրավակարգավորումներն այլ երկրներում, եզրահանգել է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը թերի է կարգավորում իրավունքի ինքնապաշտպանության կենսագործման ձևն ու եղանակները, հետևաբար՝ նշված ինստիտուտի հասկացության և հատկանիշների օրենսդրական ամրագրումը կնպաստի քաղաքացիաիրավական հարաբերությունների զարգացմանը:

Աշխատանքի երրորդ գլխում՝ «Քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության առանձնահատկությունները մասնավոր իրավունքի այլ ինստիտուտների կարգավորումների ներքո» վերտառությամբ, հեղինակը բավականին մանրամասն անդրադարձել է պայմանագրային

պարտավորությունների կատարմանը նպաստող ինքնապաշտպանության եղանակների հասկացությանը և դասակարգմանը, սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված վինդիկացիոն և նեգատոր հայցերին, իրավունքի ինքնապաշտպանության և հարևանային իրավունքի փոխհարաբերակցությանը քաղաքացիական իրավունքում:

Աշխատանքի երրորդ գլխում կատարված ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հեղինակը, հղում անելով նաև ներպետական նախադեպային պրակտիկային, հանգել է մի շարք եզրակացությունների: Դրանց շարքում կարելի է առանձնացնել հատկապես հետևյալները.

- Առանձին ինստիտուտներում իրավունքի ինքնապաշտպանության կիրառման պայմանների նախատեսումը.
- Վինդիկացիոն և նեգատոր հայցերի, որպես իրավունքի պաշտպանության միջոցների, շրջանակներում իրավունքների ինքնապաշտպանության մասին քննարկումներ անցկացնելը ինքնապաշտպանության իրավունքի ընկալման լայն իմաստով.
- Հարևանային իրավունքն ու իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտները քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորմանն ուղղված փոխկապակցված, սակայն համալիր ինստիտուտներ դիտարկելը, ընդ որում, հարևանային իրավունքի որոշ դրսևորումներ հանգեցնում են իրավունքի պաշտպանությանը, մասնավորապես՝ իրավունքերի ինքնապաշտպանությանը, սակայն դրանց զուգորդումը որևէ կերպ չի կարող համարվել դրանց նույնացման համար բավարար և անհրաժեշտ հիմնավորում:

Ատենախոսության կառուցվածքը թույլ է տվել հեղինակին համակարգային, բազմակողմանի, ամբողջական և ճիշտ եղանակներով լուծել հետազոտության թեմայի վերաբերյալ առաջ քաշած խնդիրները: Աշխատանքը գրված է գրագետ իրավաբանական լեզվով:

Միևնույն ժամանակ հարկ է արձանագրել, որ աշխատանքի վերաբերյալ առկա են որոշ նկատառումներ և դիտողություններ, որոնք ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին.

1. Ատենախոսական աշխատանքի առաջին գլխի առաջին պարագրաֆում (էջեր 47-50) հեղինակը նշում է. «...Իրավունքների ինքնապաշտպանությունը՝ որպես սուբյեկտիվ իրավունք, դրա իրացումը բնորոշ է քաղաքացիական իրավունքի բոլոր սուբյեկտներին, այդ թվում՝ իրավաբանական անձանց և պետությանը: Հաջորդիվ, գալով այն եզրահանգման, որ իրավունքների ինքնապաշտպաության ինստիտուտն օժտված է մի շարք առանձնահատկություններով, հեղինակը եզրահանգում է, որ իրավունքների ինքնապաշտպանությունը բնորոշ է միայն ֆիզիկական անձանց: Այսինքն, նշված շարադրանքում առկա են իրարամերժ եզրահանգումներ և իմաստային անցման որոշ թերություններ:

Միևնույն ժամանակ, ատենախոսության առաջին գլխում հեղինակը իրավաբանական անձանց և պետությանը՝ որպես իրավունքների ինքնապաշտպանության սուբյեկտ դիտարկելը համարել է խնդրահարույց, սակայն բավարար չափով վերլուծության և ուսումնասիրության չի ենթարկվել նշված եզրահանգումը, մինչդեռ գտնում ենք, որ համապատասխան ուսումնասիրությունն ու վերլուծությունը ավելի նորարար և արժեքավոր կդարձնեին աշխատանքը:

2. Ատենախոսական աշխատանքի երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում հեղինակը մանրամասն անդրադարձել է սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված վինդիկացիոն և նեգատոր պահանջների առանձնահատկություններին, դրանց վերաբերյալ ձևավորված դատական պրակտիկային և նշվածի համատեքստում ներկայացրել առաջարկություններ, մինչդեռ կարծում ենք, որ բացակայում է կապը նշված ինստիտուտների և ատենախոսության թեմատիկայի միջև: Հետևաբար՝ վինդիկացիոն և նեգատոր պահանջների մանրամասն ուսումնասիրությամբ, մեր կարծիքով, անհարկի ծանրաբեռնվել է աշխատանքը:

3. Կարծում ենք, որ աշխատանքը կշահեր, եթե բացի ռուս հեղինակներից (աշխատանքում մեծամասնություն են կազմում ռուս հեղինակների գաղափարները) ներկայացվեր և իրավահամեմատական մեթոդի կիրառմամբ վերլուծության ենթարկվեր նաև խնդրո առարկայի հետ կապված այլ պետությունների իրավական և դատական պրակտիկան, ինչպես նաև ներկայացվեին օտարերկրյա հեղինակների դիտարկումները քննարկվող ինստիտուտի վերաբերյալ:

Այնուհանդերձ, ներկայացված նկատառումները չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան: Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված գիտական հրատարակությունների համար ընդունելի պարբերականներում հեղինակի հրատարակած թվով 10 հոդվածները բավարար չափով արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Հետևաբար, քննարկվող ատենախոսական հետազոտությունն արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող, ավարտուն, հետաքրքիր, ինքնուրույն ուսումնասիրություն է, որը ներառում է տեսության, օրենսդրության, իրավակիրառ պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված լուծումներ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Աննա Արայի Մկրտչյանի՝ «Իրավունքի ինքնապաշտպանությունը քաղաքացիական իրավունքում» վերտառությամբ ատենախոսությունը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման ԺԲ.00.03 մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր,

ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ:

Արդարադատության ակադեմիայի
գիտահետազոտական և ծրագրամեթոդական
աշխատանքների կազմակերպման բաժնի ղեկավար,
գիտական խորհրդի քարտուղար՝ **Ա.Գալստյան**